ՀՖՍԿՊԻ -Ի ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Չ Ա Փ Ա Ն Ի Շ Ն Ե Ր

1.Նախագծի թեմայի արդիականություն և հիմնավորվածություն

Գնահատվում է նախագծի գիտական բովանդակությունը, թեմայի արդիականությունը, թեմայի վերաբերյալ գիտական հետազոտությունների վերլուծության աստիճան:

2.Հետազոտության օբյեկտի և առարկայի հստակ ձևակերպում

Ուսումնասիրվող հիմնախնդրի օբյեկտի և առարկայի տարանջատում, ամբողջական և հստակ ներկայացում:

3.Հետազոտության նպատակի և խնդիրների հստակ ձևակերպում, դրանց ամբողջություն

Գնահատվում է հետազոտության նպատակի և խնդիրների ձևակերպման պարզությունը, հստակությունը, դրանց լուծելու իրատեսությունը:

4.Խնդիրների համապատասխանությունը հետազոտության նպատակին

Գնահատվում է առաջադրված նպատակի բովանդակության արտացոլման աստիճանը խնդիրներում:

5.Հետազոտության մեթոդների համապատասխանությունը առաջադրած խնդիրներին

Գնահատվում է պլանավորված մեթոդների հնարավորությունը առաջադրված խնդիրների ամբողջական լուծման համար:

6.Գիտական նորույթ

Գնահատվում է հետազոտության թեմայի նորույթը, նոր ամբողջական և հիմնավորված պատկերացումների ներկայացում:

7.Հետազոտության տեսական նշանակություն

Գնահատվում է նախագծի վերջնական արդյունքների կարևորությունը գիտության տվյալ կամ հարակից ոլորտների տեսության համար:

8.Հետազոտության կիրառական նշանակություն

Գնահատվում է հետազոտության արդյունքների գործնականում կիրառման հնարավորությունը, առժեքը, թիրախը:

9.Հետազոտության իրականացման համար նյութատեխնիկական ապահովման աստիճանը

Նախագծի նյութատեխնիկական ապահովվածության աստիճանը, այլ բուհերի, գիտական կենտրոնների սարքավորումների օգտագործում:

10. Հետազոտության ծրագրի իրատեսությունը

Գնահատվում է ըստ փուլերը գործողությունների ճիշտ հերթականությունը,

փուլում ակնկայվող արդյունքի իրաատեսությունը և հստակությունը, վերջնարդյունքի համապատասխանությունը հետազոտության նպատակին:

11. Նախագծի պլանավորման հստակություն և ճշգրտություն

Գնահատվում է նախագծի պլանավորման տրամաբանությունը, իրատեսությունը, պլանի ամբողջությունը և համապատասխանումը նաղագծի խնդիրներին, գործուղումների նպատակաարմարությունը, նախագծի տարբեր բաժինների ֆինանսավորման ծավալի հիմնավորվածությունը:

12. Հետազոտության ղեկավարի և խմբի գիտական ներուժը

Գնահատվում է նախագծի հաջող իրականացման հնարավորությունը՝ պայմանավորված խմբի ղեկավարի մասնագիտական մակարդակով, մագիստրանտների, ասպիրանտների, հայցորդների գիտական թեզերի ղեկավարումով, մասնակիցների օպտիմալ թվաքանակով, թեմային համապատասխան կամ թեմային առընչվող վերջին 5 տարվա հիմնական հրապարակումներով:

13. Հետազոտության իրականացման համար անհրաժեշտ փորձ

Գնահատվում է խմբի ղեկավարի և անդամների մասնակցությունը նման մրցույթներին, դրանց արդյունքները:

14. Ստացված արդյունքների հանրայնացնում

Գնահատվում է ստացված արդյունքների հրապարակումների պլանավորումը գրախոսվող հեղինակավոր մասնագիտական գիտական պարբերականներում՝ առավելապես Web of Science, Scopus, РИНЦ գիտական շտեմարաններում, ուսումնական ձեռնարկների, դասագրքերի, մենագրությունների հրատարակումը:

15. Միջամբիոնային գիտական համագործակցություն

Գնահատվում է հետազոտական խմբում ՀՖՍԿՊՒ-ի այլ ամբիոնների ուսուցանվողների ընգրկումը:

16. Միջբուհական (միջգերատեսչական) գիտական համագործակցություն

Գնահատվում է հետազոտական խմբում ՀՀ-ան այլ բուհերի ուսուցանվողների ընգրկումը:

17. Միջազգային գիտական համագործակցություն

Գնահատվում է հետազոտական խմբում արտերկրյա ուսուցանվողների ընգրկումը:

18. Գրականություն

Գնահատվում է թեմային առնչվող և նախագծում ներկայացված գրականության ցուցակը, վերջին 10 տարվա ուսումնասիրված գրականության քանակը:

ՆԱԽԱԳԾԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գնահատական	Չափանիշներ
5 - Գերազանց	Նախագծի բաժնի բովանդակությունը լիովին համապատասխանում է տվյալ պահանջին, առկա թերությունները չնչին են:
4 - Լավ	Բաժնի բովանդակությունը առաջադրված պահանջներին համապատասխանում է որոշակի վերապահումներով:
3 - Միջին	Բաժնի բովանդակությունը հիմնականում բավարարում է առաջադրված պահանջին, սակայն կան զգալի թվով անհամապատասխանություններ:
2 – Միջինից ցածր	Նախագծի բաժնի բովանդակությունը բավարար չէ պահանջի վերաբերյալ ամբողջական պատկեր կազմելու համար:
1 - Վատ	Բաժնի բովանդակությունը ներկայացված է մակերեսորեն և խիստ անորոշ:
0 - Շատ վատ	Բաժնով նախատեսված պատասխանը բացակայում է կամ այն չի կարող որոշվել ներկայացված բովանդակությամբ:

Գնահատումը՝ յուրաքանչյուր չափանիշը առավելագույնը 5 միավորով, 0,5 միավորի տարբերության հնարավորությամբ: Այսպես, բաժնի աշխատանքը կարող է գնահատվի օրինակ՝ 4,5 միավոր: